## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

07.10.2016 20:24

Հարգելի փաստաբաններ

2016 թվականի հոկտեմբերի 07-ին, ժամը 17:00, ք.Երևան, փ.Ջագյան 2, 4-րդ հարկ, թիվ 14 սենյակում, ՀՀ փաստաբանների պալատում (այսուհետ՝ Պալատ) տեղի ունեցավ Շիրակի մարզում մարզային համակարգողի 09.10.2016թ. ընտրության քվեաթերթիկների տպագրությունը:

**Տպագրվել է. 47 հատ քվեաթերթիկ (45 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 30.09.2016թ. դրությամբ, և 2 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով):**

Տպագրված քվեաթերթիկները կնքվել են Հաշվիչ հանձնաժողովի կնիքով, փաթեթավորվել են պարկերում և Հաշվիչ հանձնաժողովի կնիքի ու ընտրողների ցուցակի հետ միաժամանակ տեղադրվել են չհրկիզվող պահարանում, որը պատշաճ կարգով կնքված կապարակնիքով փակվել է:

***Միաժամանակ հայտնում ենք, որ քվեարկությունն անցկացվելու է Շիրակի մարզ, ք. Գյումրի, փ. Գարեգին Նժդեհի 7/33 հասցեում (ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Գյումրի քաղաքի նստավայր), սկսվում է ժամը 12:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 14:00-ին:***

*ՀՀ փաստաբանների պալատի*
*մարզային հաշվիչ հանձնաժողով*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })